



## **Չեկույց**

**ՀԸԳՀ (Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA)) շրջանակներում ՀՀ համաչափ զարգացմանն առնչվող` ՀՀ կառավարության պարտավորությունների վերաբերյալ**

**Հեղինակ` Լևոն Բարսեղյան**

**Երևան 2025**



**Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Լևոն Բարսեղյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:**



## Հապավումներ

ՀՀ-Հայաստանի Հանրապետություն

ԵՄ-Եվրոպական միություն

ՀԸԳՀ-Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA)

Համաձայնագիր- Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր

ՏԿԵՆ-Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ԿԳՄՄ-Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն



## Բովանդակություն

• Վերնագիր	1	
• Հապավումների ցանկ	1	
• Բովանդակություն	1	
• Մեղմագիր, կատարողական ամփոփագիր		2
• Ներածություն, այդ թվում՝ հետազոտության հարցը և քաղաքականության վերաբերյալ փաստաթղթի կառուցվածքը	4	
• Մեթոդաբանությունը և հետազոտության մեթոդները	5	
• Եզրակացությունները և վերլուծությունը, քննարկումը և հետևությունները ոլորտի քաղաքականության համար	10	
• Առաջարկություններ		25

## Սեղմագիր/ Կատարողական ամփոփագիր

Այս զեկույցը ամփոփում է մի մոնիտորինգ, որի նպատակը Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA), դրա հավելվածների, ճանապարհային քարտեզի և գործողությունների ծրագրի այն հանձնառությունների և գործողությունների և դրանց կատարման քննությունն է, որոնցով նախատեսվում է Հայաստանում ապահովել համաչափ զարգացում, մասնավորաբար՝ ՀՀ կառավարման ապակենտրոնացման, լիազորությունների վերաբաշխման և երկրի համաչափ զարգացմանն ուղղված հատուկ գործողություններ:

Մասնավորաբար նախատեսվել է.

1. Ուսումնասիրել և վերլուծել 2014-2022 Հայաստանի համայնքների միավորման գործընթացի և ապակենտրոնացման գործողությունների համակարգման արդյունավետությունը կապը երկրի համաչափ զարգացման դինամիկայի հետ:
2. Բացահայտել, թե որքանով է ՀԸԳ Հրջանակներում ՀՀ իշխանությունների կատարած աշխատանքը վերոհիշյալ ուղղություններով համապատասխանում ժամանակացույցին և որքանով է եղել արդյունավետ:
3. Ուսումնասիրել ՀՀ համայնքների և պետական մարմինների լիազորությունների բաշխումն ու վերաբաշխումը ՀԸԳ-ի ուժի մեջ մտնելուց մինչև սույն մոնիտորինգի մեկնարկն ընկած ժամանակահատվածում:
4. Պարզել, թե Համաձայնագրի հիման վրա ՀՀ կառավարության ստանձնած գործողությունները որքանով են հիմնավորված կատարողականների ցուցիչներով և ժամանակացույցային ցուցիչներով:

Այս մոնիտորինգի հիման վրա կազմվել է զեկույց, որը ներառում է բացահայտումներ և ՀԸԳ հանձնառությունների կատարման կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Մոնիտորինգի նպատակն էր՝ պարզել, թե ՀԸԳ գործողությունների ծրագիրը որքանով է արդյունավետ իրականացվել 2021-2024 թթ. համար, արդյո՞ք կատարված աշխատանքները համապատասխանում են ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակացույցին և չափանիշերին: Եթե ոչ, ապա ինչ ծավալով չի համապատասխանում և ըստ այդմ՝ ինչ պետք է արվի և ինչ է առաջարկվում ՀՀ իշխանություններին՝ պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Մոնիտորինգն ընդգրկող ժամանակը ընտրվել է հաշվի առնելով օբյեկտիվ գործոններ, ինչպես օրինակ այն հանգամանքը, որ ՀԸԳ ճանապարհային քարտեզը հաստատվել է 2019 թվականին: Բայց դրան 2020-ին հաջորդել են ՀՀ համար ճակատագրական երկու իրադարձություն՝ SARS-COVID19՝ պանդեմիան/համավարակը, և Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիվ պատերազմը 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը, որ ֆորմալ կերպով ընթանում էր ադրբեջանա-դարաբաղյան ճակատում, սակայն դրանում պատերազմող կողմ էր նաև Հայաստանը: ՀՀ կառավարությունը վերանայել է ճանապարհային քարտեզը 2021-ին: Մոնիտորինգի ենթակա այդ ժամանակահատվածը ընտրելիս, համարվել է, որ 2021 թվականից սկսած ՀՀ իշխանությունները պայմանականորեն

ավելի մեծ հնարավորություն են ունեցել սեփական պարտավորությունները կատարելու, քան մինչև այդ: Համարվել է, որ 2021-2024 թթ. 4 տարիները բավարար ժամանակահատված է հետազոտության համար վաբարար, հուսալի եւ օգտակար տեղեկություններ կուտակված լինելու տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը որպես առանձին ոլորտային թիրախ չի ներկայացված ՀԸԳՀ-ի մեջ, եւ ի նկատի ունենալով, որ համաձայնագրով ՀՀ իշխանությունները բարեփոխումներ եւ մոտարկումներ պիտի իրականացնեին բազմաթիվ ոլորտներում, որոնց մի մասը անմիջական կապ ունի արդյունավետ տեղական ինքնակառավարման եւ տարածքային համաչափ զարգացման հետ (գրոսաշրջություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, ենթակառուցվածքներ եւ այլն), հետազոտվել են համաձայնագրի մի շարք պարտավորություններ, դրանց կատարման որակը, տեմպը, հաջողությունները եւ ձախողումները, սպա կազմվել են համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ: Գնահատվել է նաեւ, թե արդյո՞ք ոլորտային օրենսդրությունը, ռազմավարությունները բավարար են կամ համարժեք են ՀԸԳՀ համաձայնագրով տարածքային համաչափ եւ արդար զարգացմանն ուղղված պարտավորությունները կատարելու համար:

Իրականացված մոնիտորինգի շնորհիվ պարզվել է, որ չնայած 2021-2024 թթ. երկրի համաչափ զարգացման ուղղությամբ ներդրված որոշ ջանքերին, առայժմ չկան վիճակագրորեն փաստարկված տեղեկություններ այն մասին, որ հատկապես Համաձայնագրով ստանձնած եւ իրականացված պարտավորությունների կատարումն ապահովել է որակական տեղաշարժ այդ ուղղությամբ: Բացի այդ, Համաձայնագրի իրականացման ճանապարհային քարտեզի գործողությունների կատարողականների ցուցիչները տարածքային համաչափ զարգացման մասով հիմնականում ընդհանրական են եւ անհնար է սահմանված թիրախների հաղթահարման քանակական եւ ծավալային պատկեր պարզել: Ըստ իրականացված մոնիտորինգի բացահայտումների կազմվել են ՀՀ կառավարությանն ուղղված առաջարկություններ, որոնց կատարումը կհանգեցնի հանձնառությունների կատարումն ու հաշվետվողակնությունը ապահովող ավելի արդյունավետ՝ նոր կամ վերանայված ճանապարհային քարտեզի մշակման եւ ընդունման:

## Ներածություն

2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրվեց<sup>1</sup> **Հայաստան-Եվրոպական Միություն համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)** (Armenia-The EU Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA))<sup>2</sup>:

2018 թվականի ապրիլի 18-ին Հայաստանի Ազգային Ժողովը միաձայն վավերացրեց Հայաստանի եւ Եվրոպական Միության միջեւ «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության մասին» համաձայնագիրը: ԵՄ անդամ երկրների կողմից համաձայնագրի վավերացումից եւ հանձնառությունների կատարման համար մշակված եւ ընդունված ճանապարհային քարտեզով նախատեսված գործողությունների իրականացումը եղել եւ մնում է ոլորտային հասարակական կազմակերպությունների եւ ՀՀ ԵՄ ինտեգրման հարցով շահագրգիռ հանրային խմբերի ուշադրության կենտրոնում: Այդ նպատակով, կարեւորելով համաձայնագրով նախատեսված հանձնառությունների կատարումը որպես ՀՀ եւ ԵՄ մերձեցման հիմնական գործիքակազմի, իրականացվել է հանձնառությունների կատարման մոնիտորինգ մի շարք պրոֆիլներով կամ ոլորտներում: Այս զեկույցը անդրադառնում է այդ հանձնառություններից այն մի քանիսի կատարման որակին, որոնց թիրախը եղել է Հայաստանի համաչափ զարգացումը:

Համաձայնագրի հանձնառությունների կատարումը ՀՀ զարգացման եւ աշխարհաքաղաքական ընտրության կամ վերանայումների համատեքստում դարձել էր խիստ անհրաժեշտ:

Մոնիտորինգի այս զեկույցը, բացի վերոհիշյալ հատվածները, ներառում է մեթոդաբանությունը եւ հետազոտության գործիքների նկարագրությունը, բացահայտումները, եզրակացությունները եւ վերլուծությունը, քննարկումը եւ հետևությունները ոլորտի քաղաքականության վերանայման համար, ինչպես նաեւ կատարված աշխատանքի հիման վրա մշակված առաջարկությունները՝ ուղղված ՀՀ կառավարությանը՝ հանձնառությունների կատարման համար ավելի արդյունավետ ճանապարհային քարտեզ ունենալու եւ հանրությանը հաշվետու լինելու համար:

<sup>1</sup> <https://president.am/hy/press-release/item/2017/11/24/President-Serzh-Sargsyans-attended-signing-ceremony/>

<sup>2</sup> [https://www.eeas.europa.eu/node/36141\\_en](https://www.eeas.europa.eu/node/36141_en)

## Մեթոդաբանությունը և հետազոտության մեթոդները

Մոնիտորինգի իրականացման համար մշակվել և ընդունվել է հետևյալ գործիքակազմը, որպես բազմաթիվ գործիքներից ամենաարդյունավետները ժամանակային և տեխնիկական սահմանափակումները հաշվի առնելով:

1. ՀՀ գործող օրենսդրության, Համաձայնագրի, դրա հավելվածների և գործողությունների ծրագրի և այլ հարակից փաստաթղթերի համացանցային ուսումնասիրություն:
2. ՀՀ կառավարությանը, համապատասխան նախարարություններին (ՏԿԵՆ, ԿԳՄՄՆ), մարզպետներին և համայնքապետներին ուղղված տեղեկությունների հարցումների հիման վրա ստացված տեղեկությունների ուսումնասիրություն:
3. Հավաքված տեղեկությունների վերստուգում:
4. Չեկոյցի տեքստային շարադրում և վերամշակումներ՝ ըստ պատվիրատուի դիտարկումների:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, հավելվածները, ճանապարհային քարտեզը և գործողությունների ծրագիրը: Դրանցից հատկանշվել են բոլոր այն դրույթները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն, բայց զգալիորեն վերաբերվել են Հայաստանի համաչափ զարգացմանը, տեղական ինքնակառավարմանը, պետական լիազորությունների վերաբաշխմանը համայնքներին:

[ՀԸԳ](#)<sup>3</sup> և 2017թ. նոյեմբերի 20-ին հաստատված՝ ՀՀ և ԵՄ միջև Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հուլիսի 2-ի N 906-Ա [որոշմամբ](#)<sup>4</sup> ստեղծվել է Միջգերատեսչական հանձնաժողով, որը նախագահում է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ [որոշմամբ](#)<sup>5</sup> հաստատվել է ՀԸԳ կիրարկման ճանապարհային քարտեզը, որը լրացվել է ՀՀ վարչապետի 2021թ. մայիսի 31-ի թիվ 587-Լ որոշմամբ:

Ըստ այդ որոշման (N 666-Լ) ՀԸԳ միջոցառումների կատարման համար պատասխանատու գերատեսչություններին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 2-ի N 906-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին պարտավոր է ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ իրականացված և իրականացվող աշխատանքների վերաբերյալ: Ըստ նույն որոշման Միջգերատեսչական հանձնաժողովը ստացված տեղեկատվության հիման վրա իրականացնել մշտադիտարկում՝ ճանապարհային քարտեզի իրականացման վերաբերյալ:

<sup>3</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=124389>

<sup>4</sup> <https://www.arlis.am/>

<sup>5</sup> <https://www.arlis.am/>

ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում տարածաշրջանային զարգացմանը վերաբերում են Հավելված 1-ի 132-ից 134-րդ կետերը, իսկ Հավելված 2-ից՝ 79-81-րդ կետերը: Այսպես.

### **ՀԸԳՀ-ի համաչափ զարգացման հանձնառություններից**

**Առաջին հավելվածում** Համաձայնագրի 48 հոդվածի հիման վրա նախատեսված են հետևյալ հանձնառությունները.

#### **(1) 132-րդ հանձնառությունը.**

Տարածաշրջանային զարգացում.

«Տարածքային աճի բեռեղների զարգացում.

- ՀՀ-ում տարածքային աճի բեռեղներում զարգացման առաջնային իմպուլսներ ապահովող նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացում
- տարածքային աճի բեռեղներում զարգացման առաջնային իմպուլսներ ապահովող ծրագրերի իրականացում;
- տարածքային աճի բեռեղներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում»:

- Այս հանձնառության կատարման ժամկետը սահմանված է՝ 2019 թ.-ից սկսած :
- Համակարգող եւ պատասխանատու մարմին սահմանված է ՀՀ ՏԿԵՆ-ը:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը հետևյալն է. Տարեկան գործողությունների ծրագիր 2018, TAIEX 2020; NIP blending; ԵՄ արտաքին ներդրումային ծրագիր

#### **(2) 133-րդ հանձնառությունը.**

Տարածաշրջանային զարգացում.

«ՀՀ տարածքային համաչափ զարգացում/ՀՀ բնակավայրերում բարելավված ենթակառուցվածքների ապահովում

1. Մարզային եւ տեղական ենթակառուցվածքների ցանցերի բարելավում (տրանսպորտ, ջուր, գազ, էներգիա, ՏՏ եւ այլն),

–տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում,

- գազի ենթակառուցվածքների զարգացում,

- տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացում

2. ՀՀ տարածքների սոցիալական ենթակառուցվածքի եւ ծառայությունների բարելավում (կրթություն, առողջապահություն, սոցիալական աջակցություն սպորտ եւ ժամանց, մշակույթ)

- Կրթության զարգացում

- Առողջապահական ենթակառուցվածքների զարգացում

- Սոցիալական աջակցության ենթակառուցվածքների եւ ծառայությունների զարգացում

- Սպորտի, հանգստի եւ մշակույթի զարգացում»:

- Այս հանձնառության կատարման ժամկետը սահմանված է՝ 2019 թ.-ից սկսած:

- Համակարգող եւ պատասխանատու մարմին սահմանված են. ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն/շահագրգիռ այլ գերատեսչություններ, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը հետեւյալն է. Տարեկան գործողությունների ծրագիր 2018. ԵՄ-ն Հայաստանի համար. Տարածքային զարգացում, TAIEX 2020, NIP blending, ԵՄ արտաքին ներդրումային ծրագիր:

### (3) 134-րդ հանձնառությունը.

Տարածաշրջանային զարգացում.

«ՀՀ տարածքային համաչափ զարգացում/ՀՀ բնակավայրերի տնտեսական զարգացում: ՀՀ տարածքներում մասնավոր ներդրողների կողմից համայնքների տնտեսական աճի վրա էական ազդեցություն ունեցող ծրագրերին աջակցության ցուցաբերում, բիզնես ենթակառուցվածքների զարգացում (արդյունաբերական պարկեր, գյուղմեխանիզացիայի պարկեր, բիզնես միավորներ եւ այլն) մարզային զբաղվածության, բիզնես եւ ձեռնարկատիրության խթանում (գյուղ մթերքի վերամշակում, տուրիզմ, ՏՏ, զարգացում, նորարարություն)»:

- Այս հանձնառության կատարման ժամկետը սահմանված է՝ 2019 թ.-ից սկսած:
- Համակարգող եւ պատասխանատու մարմին սահմանված են. ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն/շահագրգիռ այլ գերատեսչություններ, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը հետեւյալն է. Տարեկան գործողությունների ծրագիր 2018. ԵՄ-ն Հայաստանի համար. Տարածքային զարգացում, TAIEX 2020, NIP blending, ԵՄ արտաքին ներդրումային ծրագիր:

**Երկրորդ հավելվածում** Համաձայնագրի 105 հոդվածի<sup>6</sup> 2-րդ կետի<sup>7</sup> a, b, c կետերի ((a) բազմաստիճան կառավարման ուժեղացում այնքանով, որքանով այն ազդեցություն է ունենում կենտրոնական, տարածքային եւ տեղական մակարդակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածքային եւ տեղական շահագրգիռ կողմերի ներգրավվածության բարձրացմանը; (b) տարածքային զարգացմանը ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության համախմբում; (c) համաֆինանսավորման աջակցություն տարածքային զարգացման ծրագրերում եւ նախագծերում ներգրավված կողմերից) հիման վրա նախատեսված են հետեւյալ հանձնառությունները.

### (4) 79-րդ հանձնառությունը.

ՀՀ տարածքային համաչափ զարգացման ապահովում, այդ թվում՝

<sup>6</sup> ԳՆՈՒԽ 22, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՄԻՋՍԱՅՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «1. Կողմերը պետք է խթանեն տարածաշրջանային զարգացման քաղաքականության ոլորտում փոխադարձ ըմբռնումը եւ երկկողմանի համագործակցությունը, այդ թվում՝ տարածաշրջանային քաղաքականությունների ձեւավորման եւ իրականացման մեթոդները, բազմակարգակ կառավարումը եւ գործընկերությունը՝ առանձնահատուկ շեշտադրելով անբարենպաստ վիճակում գտնվող տարածքների զարգացումը եւ տարածքային համագործակցությունը՝ ազգային, տարածաշրջանային եւ տեղական իշխանությունների, սոցիալ-տնտեսական գործիչների եւ քաղաքացիական հասարակության միջեւ հաղորդակցության ուղիներ ստեղծելու եւ ստեղծելությունների ու փորձի փոխանակման գործընթացն ընդլայնելու նպատակով:»

<sup>7</sup> «Մասնավորապես, Կողմերը պետք է համագործակցեն՝ Հայաստանի Հանրապետության գործելակերպը հետեւյալ սկզբունքների համապատասխանեցնելու նպատակով...»

1. 2016-2025 թթ. Հայաստանի տարածքային զարգացման (ՀՏՁՌ) ռազմավարության հաջող իրականացում, վերանայում՝ խելացի մասնագիտացման մոտեցման (Smart Specialization Strategy-SSS) ինտեգրմամբ՝ ազգային կամ մարզային մակարդակներում իրականացվող պիլոտային ծրագրերի միջոցով:

2. Տեղական եւ տարածքային զարգացման տվյալների բազաների եւ տեղական ու տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման պարամետրիկ ինդեքսավորման համակարգերի զարգացում:

- Այս հանձնառության կատարման ժամկետը նշված է «շարունակական»: Եթե նույնիսկ «շարունակական» են տվյալ գործողությունները ապա, անհրաժեշտ են իրականացման սանդղակներ և ժամանակացույցեր, որոնք կարտացոլեն արդեն կատարված և կատարվելիք աշխատանքները:
- Համակարգող եւ պատասխանատու մարմին սահմանված է ՀՀ ՏԿԵՆ-ը:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը տեխնիկական է:

**Ակնկալվող արդյունքները.** Տարածքային զարգացման համահարթեցման եւ (a) միջին ինստիտուցիոնալ համակարգման գործընթացի, մասնավորապես՝ տարածքային քաղաքականությունների մշակման եւ իրականացման գործընթացում կենտրոնական եւ տեղական վարչարարություն իրականացնող մարմինների ուղղահայաց եւ հորիզոնական փոխգործունեության մեխանիզմի կատարելագործում, խորը մշտադիտարկում եւ գնահատում, ինչպես նաեւ խելացի մասնագիտացման ներդրմամբ մշակված տարածքային զարգացման ռազմավարության իրականացում:

**(5) 80-րդ հանձնառությունը.**

3. Բազմամակարդակ կառավարման մեխանիզմի ամբողջական ներդրում, տարածքային զարգացման գործողությունների ապահովման ծրագրային մոտեցումների մշակում եւ հաջող իրականացում, տարածքային զարգացման գործառնական ծրագրի (ՏՁԳԾ) կառավարման մեխանիզմի ներդրում եւ իրականացում:

- Այս հանձնառության կատարման ժամկետը՝ 2021-2022 թթ., թեպետ համաձայնագրով ժամկետ նախատեսված չէ:
- Համակարգող եւ պատասխանատու մարմին սահմանված է ՀՀ ՏԿԵՆ-ը:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը տեխնիկական եւ ֆինանսական է:

**Ակնկալվող արդյունքները.** Կատեղծվեն ռազմավարական, թափանցիկ եւ արդյունավետ ձեւով՝ դրամաշնորհային սխեմաների կամ տարածքային զարգացման (ՏՁ) քաղաքականության գործիքների նախագծման եւ կառավարման կարողություններ: Ներդրված բազմամակարդակ կառավարման մեխանիզմ:

**(6) 81-րդ հանձնառությունը.**

4. Տարածքային զարգացման նոր դրամաշնորհային սխեմայի մշակում և ներդրում՝ ԵՄ-ի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, որը պետք է մշակվի Տարածքային զարգացման ծրագրերի Պիլոտային դրամաշնորհային սխեմաների փորձի հիման վրա: Այս հանձնառության կատարման ժամկետը նախատեսված չէ:

- Այս հանձնառության կատարման ժամկետը՝ 2021-2022 թթ., թեպետ համաձայնագրով ժամկետ նախատեսված չէ:
- Համակարգող և պատասխանատու մարմին սահմանված է ՀՀ ՏԿԵՆ-ը:
- Նախատեսված ԵՄ աջակցությունը «LEAD»-ն է:

**Անկալվող արդյունքները.** Տարածքային զարգացման ծրագրային ուղիները (դերակատարներ՝ ՀՀ ՏԿԵՆ, ՀՏՀՀ, այլ նախարարություններ) մշակված են և ստացել են աջակցություն՝ մեծացնելով տարածքային դերակատարների կարողությունները, ինչպես նաև նպաստելով ռազմավարական նպատակների և համաֆինանսավորման մեխանիզմներին հասնելուն:

Այսպիսով ի մի բերելով. ՀՀ տարածքային համաչափ զարգացման համար ՀՀ կառավարությունը ՀԸԳՀ համաձայնագրի կատարման գործողությունների ծրագրով ստանձնել է 6 ուղղակի և անուղղակի հանձնառություն. Հավելված 1-ից 132-ից 134-րդ կետերը, իսկ Հավելված 2-ից՝ 79-81-րդ կետերը:

### **Տեղեկությունների հարցումներ և ստացում պատասխանատու ատյաններից**

Մոնիտորինգի շրջանակներում այս հանձնառությունների կատարման վիճակի մասին տեղեկություններ են հարցվել և ստացվել ՀՀ պետական կառավարման մարմիններից:

Մոնիտորինգի շրջանակներում պլանավորվել է պարզել, թե ՀՀ կառավարությունը ինչ ծավալով է իրականացրել ստանձնած պարտավորությունները: Ըստ այդմ մշակվել են տեղեկության հարցումներ և հղել դրանք ՀՀ վարչապետին, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Երեւանի քաղաքապետարանին և այլն: Ստացված տեղեկությունների ուսումնասիրությունների արդյունքում նոր, լրացուցիչ տեղեկությունների հայթայթման նպատակով որոշ հաստատությունների լրացուցիչ գրավոր հարցումներ են հղվել:

Բոլոր այդ հարցումների պատասխանները տրամադրվել են բարեխղճորեն: Ստացված տեղեկությունների մասին տեղի են ունեցել նաև հեռախոսային ծավալուն զրույցներ կամ հարցազրույցներ պաշտոնյաների հետ: ՀՀ վարչապետին հղված հարցումների պատասխանները ստացվել են ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակից, որը զբաղվում է համաձայնագրի իրականացմամբ:

## Եզրակացություններ եւ վերլուծություն

Ստացված պատասխաններից եւ համացանցային բաց աղբյուրներից Համաձայնագրի եւ հարակից փաստաթղթերի, այդ թվում գործողությունների ծրագրի ճանապարհային քարտեզի ուսումնասիրություններից, մասնավորաբար, պարզվել է հետևյալը:

Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարությունից ստացված տեղեկատվության, նախատեսված էր Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման 2016-2025թթ. ռազմավարության վերանայում իսկազի մասնագիտացման մոտեցման (Smart Specialization Strategy-SSS) ինտեգրմամբ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2021թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1728-Ն որոշմամբ ՀՀ կառավարության արձանագրային որոշումներն անվավեր են ճանաչվել՝ մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել նոր ՀՀ տարածքային զարգացման 2025-2030թթ. ռազմավարությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է «2016-2025 թթ. Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության (ՀՏՁՌ) իրականացում եւ սմարթ մասնագիտացման մոտեցման ինտեգրում» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ՀՀ տարածքային զարգացման 2025–2030թթ. ռազմավարության մշակում»: Ի լրումն վերոնշյալ պարզաբանմանը, համաձայն ՏԿԵՆ տեղեկատվության, ՀՀ տարածքային զարգացման 2025–2030թթ. ռազմավարությունը չի ներառում իսկազի մասնագիտացման մոտեցման (Smart Specialization Strategy-SSS) բաղադրիչ:

**«Քազմամակարդակ կառավարում – Տարածքային զարգացման գործողությունների ծրագրային մոտեցում, ՏՁԳԾ կառավարում»** միջոցառումն իրականացվել է, ըստ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի հաղորդման: 2022թ. իրականացված համայնքների միավորման գործընթացի արդյունքում բարձրացվել է տարածքային կառավարման մարմինների դերը եւ հստակեցվել են վերջիններիս գործառույթները: ՀՀ վարչապետի 29.12.2022թ. N 1550-Լ որոշմամբ հաստատվել են ՀՀ մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները, իսկ 31.10.2023թ. N 1080-Ա որոշմամբ սահմանվել են մարզպետների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքները, արդյունքում գործառույթները դարձել են առավել նպատակային եւ արդյունավետ:

Չնայած այս պնդմանը, թե 2022թ. իրականացված համայնքների միավորման գործընթացի արդյունքում բարձրացվել է տարածքային կառավարման մարմինների դերը եւ հստակեցվել են վերջիններիս գործառույթները, եւ այն հանգամանքին, որ «...հաստատվել են Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները, իսկ 31.10.2023թ. N 1080-Ա որոշմամբ սահմանվել են մարզպետների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքները, արդյունքում գործառույթները դարձել են առավել նպատակային եւ արդյունավետ», մոնիտորինգի ընթացքում չի հայտնաբերվել որեւէ հիմնավորում այդ գնահատողական դատողությունների: Իրականում այդ դերը մնացել է նույնը, եւ վարչապետի որոշումն ընդամենը սահմանել է մարզպետների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքները: Դրա հետ համայնքների խոշորացումը օրգանական կապ չունի: Միաժամանակ ակնհայտ է, որ համայնքների խոշորացումը տեխնիկապես ավելի դյուրացրել է համայնքապետարանների աշխատակազմերի հետ

մարզպետարանների աշխատանքը, համայնքների թվի կրճատման տեխնիկական պատճառով: Համայնքների խոշորացման արդյունքում մարզպետարանները եւ դրանց աշխատակիցները համայնքների հետ հարաբերվելիս նախկինից անհամեմատ ավելի քիչ ծանրաբեռնվածություն են ունեցել: Այսպես օրինակ, եթե նախկինում Շիրակի մարզպետարանը պաշտոնական հարաբերություններ ուներ 119 համայնքապետերանների եւ համայնքապետերի հետ, այժմ՝ խոշորացումից հետո հարաբերություններ ունի միայն 6 համայնքների հետ, կամ, եթե նախկինում ՀՀ 10 մարզպետարանները պաշտոնական հարաբերություններ ունեին ՀՀ 914 համայնքապետերանների եւ համայնքապետերի հետ, այժմ՝ խոշորացումից հետո հարաբերություններ ունեն ընդհանուր առմամբ 70 համայնքների հետ:

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի հաղորդման մեջ այս դրվագի առնչությամբ եւ ՀՀ վարչապետի 2022 թ. 1550-Լ որոշման մեջ չի հիշատակվում Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA) կամ որեւէ հանձնառություն: Այսինքն չկա որեւէ կապացություն Համաձայնագրի որեւէ հանձնառության կատարման հետ: Այնինչ, եթե հանձնառությունների մեջ լինեք գործողության որեւէ ցուցիչ, հնարավոր կլինեք գնահատել՝ իրականացվել է կոնկրետ հանձնառությունը, համարել՝ հանձնառությունը կատարված, թե՞ չհամարել:

Ըստ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի հաղորդման, «Նոր ՏՉ Դրամաշնորհային սխեման կարող է (եւ պետք է) մշակվի Տարածքային զարգացման ծրագրերի պիլոտային դրամաշնորհային սխեմաների փորձի հիման վրա՝ ԵՄ-ի եւ ՀՀ կառավարության համատեղ համաֆինանսավորմամբ» դրույթի շրջանակներում իրականացվում է «Տեղական դերակատարների հզորացում հանուն Շիրակի, Լոռու եւ Տավուշի մարզերի զարգացման» ծրագիրը: Մասնավորաբար

1. «Տեղական դերակատարների հզորացում հանուն Շիրակի մարզի զարգացման» (LEAD) ծրագրի իրականացման արդյունքում 2024 թվականին Շիրակի մարզում հաղթած դրամաշնորհային ծրագրերի թիվը հասնում է 81-ի, որից 41-ը՝ համայնքային եւ 40-ը՝ բիզնես զարգացման ծրագրեր: 81 դրամաշնորհներից 38-ը տրամադրվել են կանանց առաջնորդությամբ ծրագրերին, 43-ը՝ տղամարդկանց: Ընդհանուր առմամբ 2022-2024թթ. ընթացքում իրականացվել է 3 գրանտային հայտարարություն (3 grant calls): 81 դրամաշնորհների ընդհանուր քույզեն եղել է 1.687.763 եվրո, որից՝ 1.444.212 եվրո LEAD4Shirak ծրագրի գումարներն են, եւ 243.551 եվրո դրամաշնորհառուների ներդրումը (այդ թվում եւ համայնքների): Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակում ստեղծվել է 83 աշխատատեղ, որից 23-ը տղամարդ են եւ 60-ը՝ կանայք: Այդ 83 աշխատողներից 20-ը երիտասարդներ են, իսկ 25-ը խոցելի խմբերի ներկայացուցիչ:

2. «Տեղական դերակատարների հզորացում հանուն Լոռու եւ Տավուշի մարզերի զարգացման» (LEAD) ծրագրի իրականացման արդյունքում 2024թ. Լոռու եւ Տավուշի մարզերում հաղթած նախաձեռնությունների թիվը հասնում է 99-ի, որից 17-ը՝ համայնքային եւ 82-ը՝ բիզնես եւ հասարակական հատվածի զարգացման ծրագրեր: Ծրագրերն ընթացքի մեջ են: 2024թ.-ին ստեղծվել է 200 աշխատատեղ, այդ թվում Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց համար:

1-ին կետով նախաձեռնություններն իրականացնելիս ՏԿԵՆ-ը համագործակցել է ՄԱԿ–ի Չարգացման ծրագրի, «EU4Regions: Աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականության» ծրագրի (ղեկավար Ռոբերտ Գիրեյկո) և LEAD-ի հետ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված մի շարք տեղեկությունների և նյութերի ուսումնասիրությունը այս մասով ցույց է տալիս, որ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի զարգացման նպատակով մշակվել են զարգացման ծրագրեր, որոնք պարունակում են ժողովրդագրական, գյուղատնտեսական, ենթակառուցվածքային և այլ խնդիրների վերլուծություն, և՛ առաջարկում են կարգավորման մեխանիզմներ: Այդ ծրագրերը նախատեսում են հանրային մասնակցությունների ակտիվ մեխանիզմ: Սակայն այդ ամենը օրգանական կապ չունի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) սահմանված՝ ռեգիոնալ համաչափ զարգացման հանձնառությունների հետ: Միաժամանակ ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ մարզերի զարգացումը, իննեն դրանք հյուսիսային, թե այլ, կարող է նպաստել երկրի համաչափ զարգացմանը: Սակայն, երեք մարզերում իրականացված կամ իրականացվող ծրագրերը, որոնք ընդհանուր տարածաշրջանային զարգացման համատեքստում չեն իրականացվում, և անորոշ է համաչափության ապահովման հստակ հաշվարկված և պլանավորված համատեքստը, մանավանդ, երբ մարզերը ֆինանսատնտեսական, ժողովրդագրական, ենթակառուցվածքային ցուցանիշներով զիջում են կամ գերազանցում են այլ մարզերի զարգացման համանման ցուցանիշները, անհնար կլինի միանշանակ հայտարարել, թե այդ ծրագրերը նպաստել են կամ կնպաստեն երկրի համաչափ զարգացմանը: Դրանք, գուցե սրում են զարգացվածության տարբերությունները կամ նվազեցնում են դրանք ապահովելով համաչափություն:

Ըստ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակի հաղորդման, համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրումը և կիրառության ապահովումը իրականացվում է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ, համայնքային մակարդակում մասնակցային բյուջետավորման գործընթացը իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ:

Մասնակցային բյուջետավորման կիրառված վերոհիշյալ գործիքը տարածաշրջանային համաչափ զարգացման հանձնառության տեսանկյունից արժեքավոր է այն մասով, որ այդ 4 համայնքները լրացուցիչ ֆինանսավորում են ստացել, սակայն ակնհայտ չէ, թե այդպիսի ֆինանսավորումը նպաստել է տարածքային համաչափ զարգացմանը երկրում: Մասնակցային բյուջետավորման գործիքի կիրառությունը, որ կարող է կիրառվել նաև այլ համայնքներում, ուղիղ առնչություն չունի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) նախատեսված հանձնառությունների հետ և անմիջական ազդեցություն ունի ոչ թե համաչափ զարգացման, այլ տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրականացման հետ:

2020-2021թթ. ճանապարհային քարտեզի 152-րդ կետով նախատեսվել է վարչատարածքային բարեփոխումների շարունակականություն, միավորված համայնքների գյուղական բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի իրականացում և

համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ամբողջական ներդրում:

Վերոնշյալ կետի կատարման ուղղությամբ ըստ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) հանձնառությունների կատարման համար պատասխանատու ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակի իրականացվել են հետևյալ աշխատանքները..

1. 2019-2021թթ. ընթացքում շարունակվել են վարչատարածքային բարեփոխումները, որոնց արդյունքում համայնքների թիվը 502-ից դարձել է 71-ը (համայնքների միավորման կամ խոշորացման առայժմ վերջին փուլը): Բարեփոխումների համար իրավական հիմք են հանդիսացել «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.04.2020թ.-ին ընդունված ՀՕ-227-Ն, 24.09.2021թ.-ի ՀՕ-328-Ն և 09.06.2022թ.-ի ՀՕ-266-Ն օրենքները:

2. ՀՀ վարչապետի 2023թ. նոյեմբերի 7-ի № 1111-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին» հայեցակարգը:

Վերոհիշյալ հայեցակարգը արժեքավոր փաստաթուղթ է ապակենտրոնացման համատեքստում, որը ենթադրում է համապատասխան իրավական ակտերի ընդունման (օրենքներ, կառավարության որոշումներ, ռազմավարություն, ճանապարհային քարտեզ և այլն) և իրականացման արդյունքում ունենալ համաչափ զարգացող համայնքներ, որտեղ համայնքները կլինեն ինքնաբավ և զարգացածության մակարդակի խզվածքային տարբերություն չի լինի տարբեր համայնքների և հատկապես մայրաքաղաքի և այլ համայնքների միջև: Կառավարման ապակենտրոնացման և պետական իշխանությունից համայնքային իշխանություններին լիազորությունների վերաբաշխման տեսանկյունից Երեւանի համայնքը զգալի առավելություն ունի մյուս համայնքների նկատմամբ: Այս փաստը վկայում է համայնքային կառավարման խտրականության մասին: Այդպես. Երեւանում պետական կրթության և առողջապահության համակարգերը, օրենսդրությամբ սահմանված կարգով ամբողջությամբ գտնվում են համայնքային իշխանության կառավարման ներքո, ինչպիսի ենթակայություն այլ համայնքներում չկա, մյուս բոլոր համայնքներում այդ համակարգերը կառավարվում են կամ մարզպետարանների կամ նախարարությունների միջոցով:

ՀՀ պետական իշխանությունները, որ 2009 թվականից՝ Երեւանի համայնք դառնալուց սկսած, նպատակահարմար են համարել այդպիսի ապակենտրոնացումը, լիազորությունների վերաբաշխումը մեկ համայնքում, կամ՝ այդ լիազորությունների պատվիրակումը, անհասկանալի պատճառով մինչև 2025 թ. նման վերաբաշխում կամ պատվիրակում նպատակահարմար չեն համարել իրականացնել այլ համայնքների դեպքում: Սրա հետ մեկտեղ Երեւանում շնչին ընկնող համայնքային բյուջեն (առանց պետական առողջապահական և կրթական համակարգերի կառավարման բյուջեների) 1,5-2,5 անգամ գերազանցում է ՀՀ մյուս համայնքների միջինացված շնչին ընկնող բյուջեի ցուցանիշը: Այս ցուցանիշը պահպանվում է տասնամյակներ շարունակ, և առանց համայնքների իրական ֆինանսական համահարթեցման անհնար է ակնկալել երկրի համաչափ զարգացում: Այլ համայնքներում շնչին ընկնող համայնքային բյուջեի ցուցանիշերի

համեմատ Երեւանի շնչին ընկնող համայնքային բյուջեի առավելության պատճառներից է ոչ միայն մի շարք պետական ծառայությունների պատվիրակումների համար հատկացված դրամական միջոցների գործոնը, այլև Երեւանում տնտեսության առավել զարգացած լինելու հանգամանքը, ինչը հանգեցնել է եւ հանգեցնում է տեղական տուրքերի ծավալների զգալի մեծության:

Իշխանությունների լիազորությունների ապակենտրոնացման հնարավոր արդյունավետ քաղաքականությունը էական հանգամանք կարող էր դառնալ համայնքների եւ երկրի համաչափ զարգացման համար, սակայն դիտարկված ժամանակահատվածում այդ ուղղությամբ գործնական եւ ազդեցիկ քայլեր կամ քաղաքականություն չի վարվել:

Մոնիտորինգի ընթացքում պետական պաշտոնական կայքերի եւ պետական ու համայնքային պաշտոնյաներից ստացված տեղեկությունների հիման վրա ուսումնասիրվել են համայնքների ֆինանսավորման աղբյուրները, այդ թվում տեղական եկամուտները (գույքահարկերի, տեղական տուրքերի եւ վճարների հանրագումարները եւ այլն), այդ թվում «Համայնքների ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով հատկացված պետական դոտացիաները եւ դրամաշնորհները՝ սուբվենցիաները:

«Համայնքների ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով երկրի համախառն բյուջեից հատկացումների սկզբունքը 2021-2024 թվականների ընթացքում էական փոփոխություններ չի կրել համեմատած նախընթաց տարիների հետ, եղել են համայնքներին ֆինանսական համահարթեցման համար ֆինանսական հատկացումների հաշվարկիների մասնակի փոփոխություններ: Համայնքներին ֆինանսական համահարթեցման համար տրվող ֆինանսական միջոցները հատկացվում են համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաեւ բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջեւ առկա տարբերությունների նվազեցման նպատակով: Սա օրենքով սահմանված սկզբունքն է եւ իրավակարգավորման նպատակը:

Օրենքի 6-րդ հոդվածում 2023 թ. դեկտեմբերի 9-ին կատարված փոփոխությամբ համայնքներին հատկացվող «ա» մասով դոտացիաների ցանկում նշանակալի լրացում է արվել: Այսպես, մինչեւ այդ փոփոխությունը «ա» մասով դոտացիա էր հատկացվում միայն մինչեւ 3500 բնակիչ ունեցող համայնքներին, իսկ փոփոխությունների շնորհիվ դոտացիա է հատկացվում նաեւ այն համայնքներին, որոնց կազմում ընդգրկված են սահմանամերձ բնակավայրեր (հոդված 6, մաս 1):

Ըստ օրենքի 11-րդ հոդվածում 2023 թ. դեկտեմբերի 9-ին արված փոփոխությունների, վերանայվել են մասշտաբի ծախսային գործոնի հաշվարկման կարգի խմբերի աստիճանակարգերը: Եթե մինչ այդ մասշտաբի ծախսային գործոնի արժեքները սահմանված էին հետեւյալ խմբերի համար (1) Մինչեւ 3500 բնակիչ, (2) 3.501-5.000 բնակիչ, (3) 5.001-20.000, (4) 20.001-150.000 եւ (5) 150.000 եւ ավելի, ապա փոփոխություններից հետո մասշտաբի ծախսային գործոնի արժեքները թողնելով նույնը, օրենսդիրը սահմանել է հետեւյալ խմբերը (1) Մինչեւ 3500 բնակիչ, (2) 3.501-20.000 բնակիչ, (3) 20.001-50.000, (4) 50.001-200.000 եւ (5) 200.000 եւ ավելի:

Փոփոխություն է արվել նաև օրենքի 13-րդ հոդվածում, որով դոտացիաների հատկացման հաշվարկում ավելի մեծ կշիռ է շնորհում բարձրադիր բնակավայրերին: Այսպես, եթե մինչև 2023 թ. դեկտեմբերի 9-ը, օրենքով սահմանված էր ծովի մակարդակից մինչև 1700մ բարձրության վրա գտնվող համայնքում կիրառել 1 գործակից, 1700-2000մ բարձրության դեպքում 1,1 միավոր, իսկ 2000 եւ ավելի մետր բարձրության դեպքում 1,25 գործակից, ապա փոփոխություններով ավելացվել են այդ գործակիցները 1700-2000մ բարձրության վրա գտնվող համայնքների դեպքում 1,2, իսկ 2000մ եւ ավելի բարձրության վրա գտնվող համայնքների դեպքում՝ 1,4:

Մոնիտորինգի ենթակա ժամանակահատվածում մի շարք այլ փոփոխություններ էլ են արվել վերոհիշյալ օրենքում, որոնցով չափավոր կամ զգուշավոր կերպով ավելացվել համայնքներին՝ ընդհանուր առմամբ եւ մասնավորաբար, սահմանամերձ բնակավայրեր պարունակող համայնքներին հատկացվող պետական դոտացիաները: Սակայն այդ ավելացումները էական ազդեցություն չեն ունեցել երկրի համաչափ զարգացման վրա, տարբեր չափանիշերով խոցելի համայնքների, բնակավայրերի եւ տարածքների առաջանցիկ զարգացումն ապահովելու համար:

### **Սուբվենցիոն ծրագրերի համար պետական ֆինանսավորման մասին. 2021-2024 թթ.**


Ուսումնասիրություններով պարզվել է, որ Հայաստանի համայնքներին ենթակառուցվածքների զարգացման համար, ինչպես եւ դիտարկված ժամանակահատվածից առաջ պետական բյուջեից դրամաշնորհներ են հատկացվել, որոնց շնորհիվ իրականացվել են այսպես կոչված սուբվենցիոն ծրագրեր: Այդ ծրագրերի իրականացվում են առնվազն երկու աղբյուրներից ֆինանսական միջոցների ներդրմամբ. 1. համայնքի ներդրումը, եւ 2. պետական բյուջեից հատկացումը՝ դրամաշնորհը: Կարող են լինել նաև այլ աղբյուրներից (հիմնադրամներ, այլ պետություններ, քույր քաղաքներ, միջազգային կազմակերպություններ եւ այլն): Սեփական եւ պետական միջոցների համամասնությունը բազմազան է տարբեր ծրագրերի դեպքում, համայնքային միջոցների մասը ընդհանուր ծրագրի բյուջեում եղել 4,25%-ից մինչև 70 տոկոս՝ տարբեր ծրագրերի դեպքում:

Բացառիկ օրինակներ կան համայնքների սուբվենցիոն ծրագրերի համար սեփական միջոցների համեմատական նվազության: Օրինակ Արաքսավան համայնքի նոր պոմպակայանի ու ռոզման ցանցի կառուցման համար սուբվենցիոն ծրագրում համայնքի ներդրումը 2 տոկոս է եղել, պետական հատկացումը՝ 18,2 տոկոս, իսկ մնացածը՝ այլ աղբյուրներից է հատկացվել: Երեւանից բացի մյուս համայնքերում հատուկենտ բացառություններով սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար համայնքների սեփական ներդրումը եղել է 35-70 տոկոս, իսկ մնացած 30-65 տոկոսը եղել է պետական բյուջեից հատկացում:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են այսպիսի աշխատանքներ. ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ, ճանապարհի ասֆալտապատում, փողոցների կապիտալ նորոգումներ, համայնքապատկան վարչական շենքերի, մշակույթի տների, մարզադպրոցների, մանկապարտեզների նորոգումներ, ֆոտովոլտային կայանների տեղադրումներ, շատրվանային համակարգերի նորոգումներ եւ կառուցում, հուշարձանների տեղադրումներ, պուրակների եւ զբոսայգիների բարեկարգումներ, խաղահրապարակների կառուցում, ջրազժերի կառուցում եւ նորոգում, ուղեւորատար եւ այլ տրանսպորտի եւ տեխնիկայի ձեռքբերում, փողոցների գիշերային լուսավորության համակարգերի


կառուցում, ներհամայնքային հեղեղատարի մասնակի հիմնանորոգում, արտոավայրերի ջրարբիացման համակարգերի կառուցում, ջրարբիական աշխատանքների իրականացում, ներտնտեսային ճյուղի կոյուղագծերի վերակառուցում, խորքային հորերի պոմպերի եւ մղման խողովակաշարերի վերականգնում, բնակավայրերի գազաֆիկացում, համայնքային կենտրոնների կառուցում եւ այլն:

Այսպես. ՀՀ բոլոր 1002 բնակավայրերը ներառող բոլոր 71 համայնքները 2021 թվականին ստացել են ընդհանուր առմամբ 615 սուբվենցիոն ծրագրի ֆինանսավորում, 2022, 2023, 2024 թթ. ընթացքում համապատասխանաբար 577, 507 եւ 440: 2021-2024 թթ. պետական բյուջեից ֆինանսավորվել է ընդհանուր առմամբ 2139 ծրագիր: Տես Գծապատկեր-1-ը



Չնայած ծրագրերի քանակական անկմանը տարիների ընթացքում, տարեցտարի աճել է այդ ծրագրերի համար պետական միջոցների հատկացումների ընդհանրական ծավալը: Այսպես. 2021-2024 թթ. համայնքներին սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից հատկացված միջոցները եղել են հետեւյալ չափերով. 19352,6 մլն, 26203,7 մլն, 37086,4 մլն, 32091,8 մլն դրամ: 4 տարիների ընթացքում պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար հատկացվել է ընդհանուր առմամբ 114, 734 մլրդ դրամ:


Տես Գծապատկեր-2-ը



2021-2024 թթ. սուբվենցիոն ծրագրերի պետական ֆինանսավորման վիճակագրության ուսումնասիրությունը հետեյալ բացահայտումներին է հանգեցրել.

2021 և 2022 թվականներ ընթացքում Երեւանում և մնացած բոլոր համայնքներում իրականացված ծրագրերի համար պետական բյուջեից հատկացված միջոցները շնչին ընկնող հաշվով ընդհանուր առմամբ համադրելի են եղել: Այսպես, 2021 թ. Երեւան և մնացած բոլոր համայնքներ, համապատասխանաբար՝ 6450 դրամ և 6580 դրամ, 2022 թ. Երեւան և մնացած բոլոր համայնքներ, համապատասխանաբար՝ 7120 դրամ և 9860 դրամ: 2023-2024 թթ. ընթացքում ՀՀ մնացած համայնքներում սուբվենցիոն ծրագրերով շնչին ընկնող հաշվով պետական ֆինանսավորման ցուցանիշները սկսել են զգալիորեն գերազանցել Երեւանի համանման ցուցանիշերին: Այսպես, 2023 թ. Երեւան և մնացած բոլոր համայնքներ, համապատասխանաբար՝ 6200 դրամ և 16120 դրամ, իսկ 2024 թ. Երեւան և մնացած բոլոր համայնքներ, համապատասխանաբար՝ 980 դրամ և 16450 դրամ:

Տես Գծապատկեր-3-ը



Հարկավոր է ի նկատի ունենանալ, որ այս ծրագրերի մի մասի ֆինանսավորումները տեղի են ունեցել մեկից ավելի տարիների ընթացքում եւ 2024 թ. մեկնարկած ծրագրերի մի մասը ֆինանսավորվում են նաեւ 2025 թ.: Ի նկատի ունենալով, որ Երեւանը ենթակառուցվածքների, հարմարավետության եւ գրավչության տեսանկյունից անհամեմատ զարգացած է, քան մարզերը եւ մյուս բնակավայրերը՝ ընդհանուր առմամբ, սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման վերոհիշյալ դինամիկան ենթադրաբար նպաստելու է տարածքային զարգացման անհամաչափությունների կամ տարբերությունների նվազեցմանը: Սակայն, առայժմ չկա վիճակագրական հիմք եզրակացնելու համար, որ

- (1) այս միտումը (այլ համայնքներին ավելի շատ սուբվենցիոն աջակցություն ցուցաբերելը) կայուն է լինելու, եւ
- (2), որ կառավարությունը ունի հստակ սահմանված չափորոշիչներով ճանապարհային քարտեզ կամ ռազմավարություն կամ մտադրություն այդպես վարվելու համար: Այլ խոսքով, այս դրական աճը անհնար է գնահատել որպես տարածքային համաչափ զարգացման նպատակաուղղված քաղաքականության հետեւանք:

Չնայած մարզերի զարգացման համար կատարված որոշակի աշխատանքներին, համայնքներին հատկացված պետական դրամաշնորհներով իրականացված ենթակառուցվածքների կառուցման, նորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներին, դրանք, ըստ այս ուսումնասիրության, չեն կարող համարվել համայնքների համաչափ զարգացման համար կայուն գործոնություններ: Այդ աշխատանքները իրականացվել են պետական դրամաշնորհների միջոցով եւ չնայած դրանց մեծ ծավալին, դրանք կարող են ավարտվել կամ նվազել ցանկացած պահի, կախված պետական իշխանության տարբեր ճյուղերի եւ/կամ պաշտոնյաների դիրքորոշումներից եւ առաջնահերթությունների գնահատումներից, գնահատման կարողություններից, ներքաղաքական դրությունից, իշխանության մարմինների կամ պաշտոնյաների նախապատվությունների փոփոխություններից եւ այլ գործոններից:

Պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիոն կամ սուբվենցիոն միջոցները միշտ անբավարար են եղել համայնքների սեփական լիազորությունների կատարման համար, ինչի հետևանքով պարտականությունները միշտ թերակատարվել են, իսկ լիազորությունները անբավարար չափով են իրացվել ընդհանուր առմամբ, իսկ մասնավորաբար՝ դրանց մի մասը կատարվել են ի վնաս մյուսների կամ ծառայությունների իսպառ բացակայության (օրինակ մի շարք համայնքներում մանկապարտեզ ունենալու եւ պահպանելու ծախսերի բացակայության պատճառով կամ համայնքային իշխանությունների՝ համայնքային միջոցների սղության պատճառով նախնական կրթությունը առաջնահերթ չի համարվել):

### **ՀՀ-ում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի մասին**

Վարչապետի հաստատած «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին» հայեցակարգը, ներառում է հետևյալ բաժինները. Ներածություն, երկրում իրավիճակի եւ ապակենտրոնացման անհրաժեշտության նկարագիր, ապակենտրոնացման հիմնական սկզբունքներ, բարեփոխման օրակարգ, եւ ֆինանսավորման աղբյուրներ: Այդ փաստաթղթում նշված են ապակենտրոնացման հիմնական սկզբունքները, այդ թվում Սուբսիդիարությունը, որպես ՏԻՄ կողմից հանրային խնդիրների լուծման արդյունավետ եղանակ, եթե ակներե ցուցիչներ չկան, որ այդ խնդիրների իրականացումն ավելի բարձր մակարդակի կողմից կլինի ավելի արդյունավետ ու խնայողական:

Սկզբունքներում կարելի է տեսնել ինքնակառավարման համակարգի կայուն զարգացմանը եւ լիազորությունների ապակենտրոնացմանն ուղղված գերակա խնդիրների լուծումը միասնական եւ համալիր քաղաքականության մշակման եւ իրագործման միջոցով, տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները վերջիններիս պատասխանատվությամբ եւ համայնքի բնակչության շահերից ելնելով տեղական նշանակության հարցերի շուրջ որոշումների կայացման համար, արդարությունը եւ օրինականությունը, իրենց լիազորությունների իրականացման գործում տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների համար հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմամբ: Սկզբունքների շարքում են նաեւ ՏԻՄ լիազորությունների ամբողջականությունը եւ բացառիկությունը, ՏԻՄ-երին տրամադրվող ռեսուրսների համապատասխանությունը եւ համաչափությունը, պետական մարմինների եւ ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ եւ խորհրդակցական երկխոսությունը ապակենտրոնացման գործընթացին վերաբերող յուրաքանչյուր հարցի շուրջ պլանավորման ու որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաեւ ապակենտրոնացման գործընթացի ու տեղական ինքնակառավարման զարգացման վրա ազդեցություն ունեցող փոխկապակցված ու փոխօժանդակող կազմակերպական, տնտեսական, ֆինանսական, նյութական, սոցիալական եւ այլ գործոնների բազմակողմանի եւ համակարգային դիտարկումը:

Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին» հայեցակարգը նախատեսում է տեղական ինքնակառավարման եւ ապակենտրոնացման որոշում միջազգային գործիքների



կիրառությունը, մասնավորաբար Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հիմնական սկզբունքների աներկբա կիրառությունը, իշխանության ապակենտրոնացման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը, դրա արդյունքների հիման վրա՝ վերլուծությունը, տեղայնացումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականության իրականացման համար պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեության ապահովումը այդ մարմինների լիազորությունների, գործառույթների տարանջատման և դրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով: Բոլոր շահագրգիռ կողմերի համար թափանցիկությունը, հրապարակայնությունը և մասնակցությունը, գեներային հավասարությունը, ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման իրականացման գործընթացներում տղամարդկանց ու կանանց հավասար մասնակցության ապահովումը, նույնպես շեշտված են որպես ապակենտրոնացման հիմնարար սկզբունքներ:

Սա արժեքավոր նորանուծություն է ՀՀ օրենսդրություն, ինչը, սակայն, անցած 2 տարում համապատասխան իրավական և կիրառական զարգացումների չի հանգեցրել: Չկան այս հայեցակարգից բխած այլ փաստաթղթեր, գործող օրենսդրության փաթեթային սինքրոնացումներ և մոտարկումներ, համապատասխան ճանապարհային քարտեզ և ժամանակացույց, որը պետք է կոնկրետ ժամանակահատվածում և կոնկրետ գործողություններով ապահովեր ՀՀ լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի իրացումը կամ ներդրումը: Ինչն էլ իր հերթին նպաստելու է ՀՀ համաչափ տարածքային զարգացմանը: Այսինքն ՀՀ վարչապետի հաստատած Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը, պատշաճ և արագընթաց զարգացումների դեպքում կարող էր մի կողմից ծառայել տարածքային համաչափ զարգացման իրականացմանը, իսկ մյուս կողմից լրջորեն նպաստել Համաձայնագրի խնդրո առարկա հանձնառությունների և ճանապարհային քարտեզով նախատեսված գործողությունների ավելի հստակ սահմանմանը և իրականացմանը:

**Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի մասին**

Ըստ կառավարությունից ստացված տեղեկությունների, Հանրապետության 71 համայնքներից 70-ը (բացի մայրաքաղաք Երեւանից) ապահովվել են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերով, որոնց կիրառության շնորհիվ էականորեն ընդլայնվել են միավորված բազմաբնակավայր համայնքների վարչական կարողությունները, բարելավվել է տրամադրվող վարչական ծառայությունների որակը և հասանելիությունը: Այս պնդումը տարածքային համաչափ զարգացման հանձնառության համատեքստում հաստատել կամ ժխտել անհնար է, որովհետև չկան այդ բարելավումների որակի կամ մակարդակի ցուցիչներ: Եւ դժվար է գնահատել, թե որքանով է այդ տեխնիկական բարելավումը նպաստել Հայաստանի համաչափ զարգացման ապահովման Համաձայնագրով ստանձնված պարտավորությունների կատարմանը: Մանավանդ, այդպիսի գործողություն Համաձայնագրի ճանապարհային քարտեզում նախատեսված չէր:


## Տեղական եկամուտների հավաքագրման որակի մասին

2021թ. հունվարից ներդրվել է տեղական հարկերի (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ) հավաքագրման միասնական էլեկտրոնային համակարգը: Տեղական հարկերի վճարումը և գանձումը ամբողջությամբ իրականացվում են թվային եղանակով, առցանց:

Որպես տեխնիկական լուծում և գանձումների գործընթացում առձեռն վճարումներից էլեկտրոնային վճարումների կամ փոխանցումների անցում, սա արդյունավետ ներդրում է հակակոռուպցիոն պայքարի և ստվերի նվազեցման տեսանկյունից: Սակայն, տեղական տուրքեր վճարող սուբյեկտների ցանկագրման, քարտեզագրման, նպատակային կամ պատահական բացթողումների վերացման, կամ այլ խտսքով տեղական տուրքերի ստվերի հաղթահարման տեսանկյունից խնդիրը չի լուծվել և ստվերի վերացումը համակարգային բնույթ չի կրում: Այս ոլորտի ստվերի դեմ պայքարը կամ տեղական տուրք վճարելու պարտավորություն ունեցող սուբյեկտների ցանկագրումը և տուրք վճարողների բազաներում ընդգրկումը մնում է լուրջ մարտահրավեր համայնքային եկամուտների պատշաճ հավաքագրման համար: Իսկ համայնքային եկամուտների պատշաճ հավաքագրումը ակնհայտորեն նպաստելու է (էր), երկրի համաչափ զարգացմանը:

Գյումրիում Ժուռնալիստների Ասպարեզ ակումբի 2024 թ. իրականացված տեղական 6 տուրքերի գծով (սննդի օբյեկտի շահագործման, ավոհոլային արտադրանքի վաճառքի, ծխախոտային արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդի համար նախատեսված և այլ տուրքեր) մոնիտորինգը բացահայտել է տուրքեր վճարող սուբյեկտների ցանկագրման 10-45 տոկոսանոց թերակատարում, դրանից բխած տուրքերի հավաքագրման թերակատարումներով: Այսպես, Գյումրու կենտրոնում դիտարկված ավոհոլային արտադրանքի վաճառքով զբաղվող 130 սուբյեկտներից 52-ը 2023 թվականին այդ գործունեության համար նախատեսված տուրքերը չեն վճարել համայնքային բյուջե, որովհետև որպես տուրք վճարողներ նրանք համայնքապետարանում անհասկանալի պատճառներով գրանցված չեն եղել: Ծխախոտային արտադրանքի վաճառքով զբաղվող 79 սուբյեկտներից այդ գործունեության համար նախատեսված տուրքը համայնքային բյուջեն չեն վճարել 21-ը, սննդի օբյեկտի շահագործման համար նախատեսված տուրքերը չեն վճարել նույն տարածքում գործունեություն ծավալած 99 օբյեկտից 46-ը և այլն:

Տեսեք գծապատկեր 5-ը:



Մոտավոր գնահատմամբ ամբողջ համայնքի տարածքում այդպիսի ստվերի պատճառով համայնքի հասցված վնասը կարող է կազմել 80-150 մլն դրամ տարեկան, ինչը փաստացի Գյումրու 2023 թ. տեղական եկամուտների 3,3-6 տոկոսի չափ է: Բավարար հիմքեր կան պնդելու, որ համանման իրավիճակ է տիրում ՀՀ համայնքների մեծամասնությունում, եւ այսօրինակ ստվերի մասով դրությունը ավելի մեղմ է մայրաքաղաքում: Հայաստանի համաչափ զարգացման տեսանկյունից այսօրինակ ստվերի վերացումը զգալի ներդրում կարող էր լինել Համաձայնագրով ստանձնված եւ քննվող պարտավորությունների կատարման համար: Մակայն նման հանձնառություն համաձայնագրում չկա սահմանված:

**Համայնքներում կիրառված մասնակցային բյուջետավորման գործիքի մասին**

ՀՀ կառավարության 2023թ. N 1890-Ն որոշմամբ, համայնքներին խրախուսելու նպատակով, պետական բյուջեից մոտ 500 մլն դրամ է հատկացվել մասնակցային բյուջետավորման 2024թ. գործընթացում ներգրավված 4 համայնքների: 2025թ. ընթացքում մասնակցային բյուջետավորումը կիրականացվի 71 համայնքներից 21-ում, որոնց հատկացվելիք գումարը կկազմի մոտ 1 մլրդ դրամ:

Վերը թվարկված արդյունքների շարունակականությունն ապահովելու նպատակով ՏԿԵՆ-ի կողմից քայլեր են ձեռնարկվելու համաչափ վարչական եւ ֆինանսական ապակենտրոնացման, համայնքների ֆինանսական նոր կարողությունների ձեւավորման եւ արդյունքահեն իրավասությունների շրջանակի մեծացման ուղղությամբ:

Այս ներդրումները, օգտակար լինելով տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության եւ համայնքային բյուջեում հավելումներ ապահովելու տեսանկյունից, օրգանական կապ չունեն տարածքային համաչափ զարգացման հանձնառությունների հետ,

Համաձայնագրին առնչվող փաստաթղթերում չկան այդ հասկացումների և տարածքային համաչափ զարգացման հանձնառությունների կապակցման և կատարողական ցուցիչներ:

### **Համայնքային գրադարանների կառավարման մեխանիզմի ստեղծման մասին**

ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ Հոդված 97-ի վերաբերյալ ստացված տեղեկատվության, ՀՀ վարչապետի՝ 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշման Հավելված 2-ով (լրացվ. 31.05.21 N 587-Լ) սահմանված Հոդված 97-ի 77-րդ կետով սահմանված է «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգային ծրագրի իրականացման ընթացքում համայնքային գրադարանների կառավարման մեխանիզմների ստեղծում» միջոցառումը, որի ժամկետ է սահմանված 2022-2023թթ.: Սահմանված ժամկետում մշակվել է «Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացվել շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին: Կարծիքներն ամփոփվել են և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ Ազգային Ժողովի դիտարկմանը: 2024թ. հունիսի 4-ին ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությանն է արժանացել և Ազգային Ժողովի խորհրդին առաջարկվել է նախագիծն ընդգրկել Ազգային Ժողովի ութերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի 2024թ. հունիսի 11-ին գումարվող ԱԺ հերթական նիստերի օրակարգի նախագծում: Օրենքի նախագիծը 2024թ. հունիսի 12-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ: Օրենքի նախագիծը ուղարկվել է 2-րդ ընթերցման, ինչի արդյունքում նախագիծը լավարկվել է ու լրացվել նոր դրույթներով: Արդյունքում՝ 2024թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-344-Ն): Օրենքով սահմանվել է, որ համայնքի մշակութային կյանքն ակտիվացնելու, հանրային ընթերցանության, գեղագիտական և մշակութային կրթությունը զարգացնելու, համայնքի բնակչության որակյալ ու բովանդակալից կյանքը կազմակերպելու նպատակով կարող են ստեղծվել մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոններ, կամ նպատակին միտված ծառայությունները կենտրոնացվել համայնքում առկա մշակութային կամ ուսումնական հաստատություններում: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը համագործակցել է «Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշինք»-ի («International Federation of Library Associations and Institutions» - IFLA) հետ: Աշխատանքներն իրականացվել են առցանց ձեւաչափով:

Այս գործողությունը, թեպետ համայնքային ծառայությունների բարելավմանն ուղղված գործողություն է եղել, սակայն անհնար է պնդել, թե սա նպաստել է երկրի համաչափ զարգացման հետազոտված խնդրին կամ նպատակին:

### **Երեք մարզերում տեղական դերակատարների հզորացման ծրագրերի մասին**

ՀՀ ՏԿԵ նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն, «Տեղական դերակատարների հզորացում հանուն Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի զարգացման» ծրագրի հաշվետու ժամանակահատվածի ընթացքում՝ ՀՀ Լոռի, Տավուշի և Շիրակի մարզերում ստեղծվել և գործում են թվով 8 Տեղական Ակտիվ Խմբեր (ՏԱԽ), որոնք բոլորը ստացել են իրավական կարգավիճակ և գրանցվել են որպես հասարակական կազմակերպություն:

Հստակեցված են ՏԱԽ-երի կառավարման մեխանիզմները: ՏԱԽ-երը հավասարապես կազմված են հանրային ոլորտի, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից, տեղական բիզնեսի և քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: ՏԱԽ-երը մշակել և իրենց համաժողովների միջոցով հաստատել են ՏԱԽ-ի տարածքի ընդհանուր տեղական զարգացման ռազմավարություններ՝ հաշվի առնելով բաղկացուցիչ համայնքների զարգացման ծրագրերը, մարզային և պետական ոլորտային զարգացման ծրագրերը և տարածքային և տեղական զարգացմանն ուղղված այլ ռազմավարական փաստաթղթեր:

Տեղական նախաձեռնությունների ֆինանսավորման նպատակով ՏԱԽ-երը հայտարարում են տեղական դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման հայտարարություն (սաղմնային դրամաշնորհներ), որոնք նպատակ են հետապնդում ֆինանսավորել ՏԱԽ տեղական զարգացման ռազմավարության մեջ ամրագրված առաջնահերթությունները: Դրամաշնորհների տրամադրման ողջ գործընթացը, ներառյալ հայտարարության փաթեթը և գնահատման ուղեցույցը մշակվել են ՏԱԽ-ի կառավարման խորհրդի անդամների կողմից՝ Ծրագրի փորձագետների խորհրդատվական մասնակցությամբ և հաստատվել ՏԱԽ-ի համաժողովով: Շահած դրամաշնորհների վերջնական ցանկը ևս հաստատվում է ՏԱԽ-ի համաժողովի կողմից և ներկայացվում ՄԱԶԾ՝ Դոնոր հանձնաժողովի կողմից վավերացման: Հետագայում՝ ՏԱԽ-ի գնահատող հանձնաժողովի ունակությունների զարգացումից հետո ամբողջական որոշումները և վավերացումը կիրականացվեն տեղում՝ ՏԱԽ-երի համաժողովների կողմից:

LEADER մեթոդաբանության վերաբերյալ ծրագիրն իրականացնող գործակալությունների ու դոնոր կազմակերպության հետ համատեղ շահագրգիռ կողմերի շրջանում ներկայումս իրականացվում են լայնածավալ իրազեկման միջոցառումներ, որը նպատակ է հետապնդում լայնորեն հանրայնացնել և տարածել դա՝ որպես համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման ներառական, արդյունավետ և օրինակելի մոդել: LEADER-ը առաջնորդվում է 7 հիմնարար սկզբունքներով. ներքեւից վերեւ մոտեցում, տարածքահեն մոտեցում, տեղական գործընկերություն, ինտեգրված և բազմոլորտ ռազմավարություն, նորարարություն, կապեր և համագործակցություն, ինչպես նաև տեղական կառավարում:

«Տեղական դերակատարների հզորացում հանուն Լոռու և Տավուշի մարզերի զարգացման» (LEAD) ծրագրի իրականացման արդյունքում 2024 թվականին Լոռու և Տավուշի մարզերում հաղթած նախաձեռնությունների թիվը՝ 99, որից 17-ը՝ համայնքային և 82-ը՝ բիզնես և հասարակական հատվածի զարգացման ծրագրեր: Ծրագրերն ընթացքի մեջ են: 2024 թ. -ին



ստեղծվել է 200 աշխատատեղ, այդ թվում՝ Արցախից տեղահանված անձանց համար: 2025 թ.-ին նախատեսվում է ստեղծել 15 աշխատատեղ: Բացի այդ ծրագիրը կաջակցի արդեն իսկ իրականացվող նախաձեռնությունների մասշտաբների ընդլայնմանն ու արժեշիթաների ամբողջացմանը (60 նախկին շահառուների ներգրավմամբ):

**Առաջարկություններ**

Ի մի բերելով կատարված հետազոտությունը, վերլուծելով տարածքային համաչափ զարգացմանն ու տարածաշրջանային զարգացմանն ուղղված հանձնառությունների չափորոշիչները, դիտարկելով դրանք հստակության, խելամտության, իրատեսականության, առանձնահատուկ, համարժեք եւ չափելի լինելու հանգամանքների համատեքստում, կազմվել են հետևյալ առաջարկությունները ուղղված համապատասխան գերատեսչություններին:

ՀՀ Կառավարությանն առաջարկվում է

**1. (1) 132-րդ հանձնառության վերաբերյալ.**

«Տարածքային աճի բեկեռների զարգացում.

-ՀՀ-ում տարածքային աճի բեկեռներում զարգացման առաջնային իմպուլսներ ապահովող նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացում

- տարածքային աճի բեկեռներում զարգացման առաջնային իմպուլսներ ապահովող ծրագրերի իրականացում;

- տարածքային աճի բեկեռներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում»:

1.1. Սահմանել հանձնառության իրականացման համար անհրաժեշտ գործողությունների ամբողջական ցանկը, դրանք կատարման միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմանները,

1.2. Սահմանել կատարողականը հավաստող ցուցիչները,

1.3. Հանձնառության հաղթահարման թիրախները սահմանել հստակ եւ աներկբա, մասնավորաբար նշել.

- Որտե՞ր են տարածքային աճի բեկեռները, կամ որոնք են դրանք, ի՞նչ աշխարհագրական տիրույթներ են դրանք ընդգրկում:
- Որո՞նք են զարգացման առաջնային իմպուլսներ ապահովող նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:
- Ի՞նչ ծավալի զարգացում է ապահովվելու տարածքային աճի բեկեռներում:
- Գործարար ակտիվության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների ցանկը եւ ժամանակացույցը:
- Գործարար ակտիվության մակարդակի բարձրացման թիրախ մակարդակ(ներ)ը, ըստ ժամանակացույցի:

**2. (2) 133-րդ հանձնառության վերաբերյալ.**

«ՀՀ տարածքային համաչափ զարգացում/ՀՀ բնակավայրերում բարելավված ենթակառուցվածքների ապահովում.

1. Մարզային եւ տեղական ենթակառուցվածքների ցանցերի բարելավում (տրանսպորտ, ջուր, գազ, էներգիա, ՏՏ եւ այլն), տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում, գազի ենթակառուցվածքների զարգացում, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացում

2. ՀՀ տարածքների սոցիալական ենթակառուցվածքի եւ ծառայությունների բարելավում (կրթություն, առողջապահություն, սոցիալական աջակցություն

սպորտ եւ ժամանց, մշակույթ)։ Կրթության զարգացում, Առողջապահական ենթակառուցվածքների զարգացում, Սոցիալական աջակցության ենթակառուցվածքների եւ ծառայությունների զարգացում, Սպորտի, հանգստի եւ մշակույթի զարգացում»։

Առաջին ենթահանձնառության համար.

- 2.1.1. Սահմանել գործողությունների միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմաններ:
- 2.1.2. Սահմանել կատարողականը հավաստող ցուցիչները:
- 2.1.3. Ենթահանձնառությունների հաղթահարման թիրախները սահմանել հստակ եւ աներկբա, մասնավորաբար նշել.
  - Մարզային եւ տեղական ենթակառուցվածքների բարելավման ենթակա ցանցերի (տրանսպորտ, ջուր, գազ, էներգիա, ՏՏ եւ այլն), զարգացման ենթակա տրանսպորտային ենթակառուցվածքի, զարգացման ենթակա գազի ենթակառուցվածքների, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ցանկերը աշխարհագրական հստակ սահմանումներով:
  - Ինչ ծավալի բարելավում կամ զարգացում է ապահովվելու վերոհիշյալ ենթակառուցվածքներից յուրաքանչյուրի դեպքում:

Երկրորդ ենթահանձնառության համար.

- 2.2.1. Սահմանել միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմաններ ենթահանձնառության համար,
- 2.2.2. Սահմանել կատարողականը հավաստող ցուցիչները:
- 2.2.3. Ենթահանձնառությունների հաղթահարման թիրախները սահմանել հստակ եւ աներկբա, մասնավորաբար նշել.
  - Բարելավման ենթակա սոցիալական ենթակառուցվածքի եւ ծառայությունների ցանկերը կրթության, առողջապահության, սոցիալական աջակցության, սպորտի, ժամանց, մշակույթի, կրթության զարգացման համակարգերում:
  - Ինչ ծավալի բարելավում կամ զարգացում է ապահովվելու վերոհիշյալ ենթակառուցվածքներից յուրաքանչյուրի դեպքում:

### (3) 134-րդ հանձնառության վերաբերյալ.

Տարածաշրջանային զարգացում.

«ՀՀ տարածքային համաչափ զարգացում/ՀՀ բնակավայրերի տնտեսական զարգացում: ՀՀ տարածքներում մասնավոր ներդրողների կողմից համայնքների տնտեսական աճի վրա էական ազդեցություն ունեցող ծրագրերին աջակցության ցուցաբերում, բիզնես ենթակառուցվածքների զարգացում (արդյունաբերական պարկեր, գյուղմեխանիզացիայի պարկեր, բիզնես միավորներ եւ այլն) մարզային զբաղվածության, բիզնես եւ ձեռնարկատիրության խթանում (գյուղ մթերքի վերամշակում, տուրիզմ, ՏՏ, զարգացում, նորարարություն)»: Համաձայնագրի երկրորդ հավելվածում, 105 հոդվածի<sup>8</sup> 2-րդ կետի<sup>9</sup> a, b, c կետերի ((a)բազմաստիճան կառավարման ուժեղացում այնքանով, որքանով այն ազդեցություն է ունենում կենտրոնական, տարածքային եւ տեղական մակարդակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածքային եւ տեղական շահագրգիռ կողմերի ներգրավվածության բարձրացմանը; (b) տարածքային զարգացմանը ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության համախմբում; (c) համաֆինանսավորման աջակցություն տարածքային զարգացման ծրագրերում եւ նախագծերում ներգրավված կողմերից

3.1. Սահմանել ՀՀ տարածքային համաչափ զարգացման եւ բնակավայրերի տնտեսական զարգացման, եւ վերոհիշյալ մյուս հանձնառությունների կատարման համար գործողությունների միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմաններ:

3.2. Սահմանել յուրաքանչյուր թիրախի համար կատարողականը հավաստող ցուցիչները:

3.3. Ցուցիչների ապահովման թիրախները սահմանել հստակ եւ աներկբա, մասնավորաբար նշել.

- ՀՀ տարածքներում մասնավոր ներդրողների կողմից համայնքների տնտեսական աճի վրա էական ազդեցություն ունեցող ծրագրերին աջակցության քանակական եւ որակական ցուցիչները:
- բիզնես ենթակառուցվածքների զարգացման ցուցիչները:
- մարզային զբաղվածության, բիզնես եւ ձեռնարկատիրության խթանման ցուցիչները
- (a) բազմաստիճան կառավարման ուժեղացման ցուցիչները:
- (b) տարածքային զարգացմանը ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության համախմբման գործողությունները եւ կատարողականի ցուցիչները:
- (c) Ներգրավվելիք կողմերի տարածքային զարգացման ծրագրերում եւ նախագծերում համաֆինանսավորման աջակցության ծավալները եւ ցուցիչները:

<sup>8</sup> ԳՆՈՒԽ 22, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՄԻՋՍԱՅՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱՎՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «1. Կողմերը պետք է խթանեն տարածաշրջանային զարգացման քաղաքականության ոլորտում փոխադարձ ըմբռնումը եւ երկկողմանի համագործակցությունը, այդ թվում՝ տարածաշրջանային քաղաքականությունների ձեւավորման եւ իրականացման մեթոդները, բազմամակարդակ կառավարումը եւ գործընկերությունը՝ առանձնահատուկ շեշտադրելով անբարենպաստ վիճակում գտնվող տարածքների զարգացումը եւ տարածքային համագործակցությունը՝ ազգային, տարածաշրջանային եւ տեղական իշխանությունների, սոցիալ-տնտեսական գործիչների եւ քաղաքացիական հասարակության միջեւ հաղորդակցության ուղիներ ստեղծելու եւ տեղեկությունների ու փորձի փոխանակման գործընթացն ընդլայնելու նպատակով:»

<sup>9</sup> «Մասնավորապես, Կողմերը պետք է համագործակցեն՝ Հայաստանի Հանրապետության գործելակերպը հետեյալ սկզբունքների համապատասխանեցնելու նպատակով...»

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

**(4) 79-րդ հանձնառության վերաբերյալ.**

ՀՀ տարածքային համաչափ զարգացման ապահովում, այդ թվում՝

1. 2016-2025 թթ. Հայաստանի տարածքային զարգացման (ՀՏՁՌ) ռազմավարության հաջող իրականացում, վերանայում՝ խելացի մասնագիտացման մոտեցման (Smart Specialization Strategy-SSS) ինտեգրմամբ՝ ազգային կամ մարզային մակարդակներում իրականացվող պիլոտային ծրագրերի միջոցով:

2. Տեղական և տարածքային զարգացման տվյալների բազաների և տեղական ու տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման պարամետրիկ ինդեքսավորման համակարգերի զարգացում:

4.1. Սահմանել տարածքային զարգացման համահարթեցման և միջին ինստիտուցիոնալ համակարգման գործընթացի, մասնավորապես՝ տարածքային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում կենտրոնական և տեղական վարչարարություն իրականացնող մարմինների ուղղահայաց և հորիզոնական փոխգործունեության մեխանիզմի կատարելագործման համար անհրաժեշտ գործողությունների միջանկյալ և վերջնական ժամկետային սահմաններ, խորը մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև խելացի մասնագիտացման ներդրմամբ մշակված տարածքային զարգացման ռազմավարության սահմանման և իրականացման համար անհրաժեշտ գործողությունների միջանկյալ և վերջնական ժամկետային սահմաններ:

4.2. Սահմանել վերոհիշյալ յուրաքանչյուր թիրախի համար կատարողականը հավաստող ցուցիչները:

4.3. Ցուցիչների ապահովման թիրախները սահմանել հստակ և աներկբա, մասնավորաբար.

- Տարածքային զարգացման համահարթեցման համար:
- Միջին ինստիտուցիոնալ համակարգման գործընթացի, մասնավորապես՝ տարածքային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում կենտրոնական և տեղական վարչարարություն իրականացնող մարմինների ուղղահայաց և հորիզոնական փոխգործունեության մեխանիզմի կատարելագործման համար:
- խորը մշտադիտարկման և գնահատման համար:
- խելացի մասնագիտացման ներդրմամբ մշակված տարածքային զարգացման ռազմավարության համար:

**(5) 80-րդ հանձնառության վերաբերյալ.**

3. Բազամակարդակ կառավարման մեխանիզմի ամբողջական ներդրում, տարածքային զարգացման գործողությունների ապահովման ծրագրային մոտեցումների մշակում և հաջող իրականացում, տարածքային զարգացման գործառնական ծրագրի (ՏՁԳԾ) կառավարման մեխանիզմի ներդրում և իրականացում:

5.1. Սահմանել Բազմամակարդակ կառավարման մեխանիզմի ամբողջական ներդրման, տարածքային զարգացման գործողությունների ապահովման ծրագրային մոտեցումների մշակման եւ հաջող իրականացման, տարածքային զարգացման գործառնական ծրագրի (ՏԶԳԾ) կառավարման մեխանիզմի ներդրման եւ իրականացման համար անհրաժեշտ գործողությունների միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմաններ:

5.2. Սահմանել վերոհիշյալ յուրաքանչյուր թիրախի համար կատարողականը հավաստող ցուցիչները:

5.3. Ցուցիչների ապահովման թիրախները սահմանել հստակ եւ աներկբա, մասնավորաբար.

- Բազմամակարդակ կառավարման մեխանիզմի ամբողջական ներդրման համար
- Տարածքային զարգացման գործողությունների ապահովման ծրագրային մոտեցումների մշակման եւ հաջող իրականացման համար
- Տարածքային զարգացման գործառնական ծրագրի (ՏԶԳԾ) կառավարման մեխանիզմի ներդրման եւ իրականացման համար

#### **(6) 81-րդ հանձնառության վերաբերյալ.**

4. Տարածքային զարգացման նոր դրամաշնորհային սխեմայի մշակում եւ ներդրում՝ ԵՄ-ի եւ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, որը պետք է մշակվի Տարածքային զարգացման ծրագրերի Պիլոտային դրամաշնորհային սխեմաների փորձի հիման վրա: Այս հանձնառության կատարման ժամկետը նախատեսված չէ:

6.1. Մշակել եւ ներդնել Տարածքային զարգացման նոր դրամաշնորհային սխեմա ամբողջ ՀՀ տարածքի համար: Սահմանել իրականացման համար անհրաժեշտ գործողությունների միջանկյալ եւ վերջնական ժամկետային սահմաններ:

6.2. Սահմանել Տարածքային զարգացման նոր դրամաշնորհային սխեմայի մշակման եւ ներդրման կատարողականը հավաստող ցուցիչները:

6.3. Սահմանել Տարածքային զարգացման ծրագրային ուղիները համապատասխան, հստակ եւ աներկբա ցուցիչները:

#### **ՀՀ կառավարությանը եւ վարչապետին**

7. Վեց ամսում իրականացնել օրենսդրական եւ ենթօրենսդրական ակտերի ընդունում, որոնցով կապահովվեն ՀՀ վարչապետի 2023թ. նոյեմբերի 7-ի № 1111-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը, գործարկումը: Մասնավորաբար,

7.1. ընդունել ՀՀ-ում լիազորությունների ապակենտրոնացման ռազմավարություն եւ ճանապարհային քարտեզ, դրանում ունենալ իրավական ակտերի ընդունման հստակ ժամանակացույց, կառուցվածքային փոփոխությունների հնարավոր պլան եւ ժամանակացույց, պատասխանատուների պաշտոնյաների եւ հաստատությունների սահմանումներ:

7.2. Վերոհիշյալ աշխատանքներում, նախագծերի մշակումներին ներգրավել ՀՀ Տարածքային կառավարման նախարարության, ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ Ֆինանսների նախարարության, մարզպետարանների, ՀՀ բոլոր ՏԻՄ-ների ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության մասնագիտացած կազմակերպությունների ներկայացուցիչների և անկախ փորձագետների:

7.3. Հանրային բավարար իրագելում ապահովել այս աշխատանքների մասին, սահմանել հանրային իրագելման գործիքներ և ժամանակացույց:

7.4. Հայեցակարգից բխած իրավական ակտերի մշակումն ու գործարկումն իրականացնել այն հաշվարկով և հեռանկարով, որ հանրային բոլոր այն ծառայությունները, որոնք պետական իշխանությունը կարող է չմատուցել հանրությանը, դրանց մատուցման լիազորությունը կփոխանցի տեղական ինքնակառավարման մարմիններին: Այդպիսի փոխանցման համար հնարավոր իրավական ակտերում հարկավոր է նախատեսել մի քանի գործիքների սահմանումը, որոնք են.

- a. Համայնքային իշխանություններին փոխանցվող ծառայությունների մատուցման և կառավարման մեթոդաբանությունների մասնակցային և ներառական մշակում կամ վերամշակում:
- b. Փոխանցվող լիազորությունների պատշաճ կատարման համար համայնքապետարաններում մասնագիտացած ծառայությունների, կամ մասնագիտական բազայի, կամ կարողությունների ստեղծում համապատասխան մասնագետների վերապատրաստմամբ կամ ներգրավմամբ:
- c. Օրենքով ապահովել այդ ծառայությունների մատուցման կառավարման/կառավարչական ծախսերի համար համայնքներին համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումներ:
- d. Ծառայությունների մատուցման որակի և ֆինանսական միջոցների կանոնավոր և համակարգված վերահսկողության համակարգ:

Այլ խոսքով, առաջարկվում է, որ պետությունը իր կառավարման ենթակայության տակ պետք է պահպանի միայն այն ծառայությունները, որոնք օբյեկտիվորեն չի կարող փոխանցել համայնքներին՝ դրանց միասնական կառավարման անխուսափելիության բերումով, ինչպես օրինակ՝ սահմանների պաշտպանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, հետախուզությունը, հակահետախուզությունը, իրավապահ համակարգը, այդ թվում կոռուպցիայի դեմ պայքարը և այլն, իսկ մնացած բոլոր ծառայությունները փոխանցի տեղական ինքնակառավարման մարմիններին:

8. Ի նկատի ունենալով, որ Հայաստանի հանրապետություն-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) գործողությունների ծրագրի և ճանապարհային քարտեզի հանձնառությունները հիմնականում հստակ և որոշակի չափորոշիչներ չունեն, որոշներն ունեն կատարման անորոշ ժամկետներ և չկա հանրային հաշվետվողականության մեխանիզմ, առաջարկվում է

- ամբողջությամբ վերանայել համաձայնագրից բխած գործողությունների ծրագիրը, հանձնառությունները վերամշակել և ձեւակերպել հստակ, իրատեսական, չափելի թիրախներով, առավելագույն հստակեցում և

որոշակիացում, այդ թվում ներառելով ժամանակային ժամկետային ցուցիչներ, գործողությունների կատարողականների ցուցիչներ, կատարող-պատասխանատուների հստակ սահմանումներ, անհրաժեշտ միջոցների ծավալների նախատեսումներ, վերահսկման եւ հանրային մասնակցության մեխանիզմներ:

- Ի թիվս այդ ամենի, առաջարկվում է նաեւ մշակել եւ գործարկել Հայաստանի համաչափ զարգացման հանձնառությունների կատարման մասին հանրային հաշվետվողականության մեխանիզմ:

ՀՀ Ազգային ժողովին եւ կառավարությանը առաջարկվում է

9. Արմատապես վերանայել համայնքների ֆինանսավորման առկա համակարգերը, երբ ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են համարվում տեղական եկամուտները (գույքահարկ, տեղական տուրքեր եւ վճարներ, վարձակալական վճարներ եւ այլն) եւ պետական բյուջեից «Համայնքների ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիոն հատկացումները: Տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովմանն ուղղված՝ Հայաստանի հանրապետություն-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) հանձնառությունն իրականացնելու համար հարկավոր է երկրի համախմբված բյուջեից համայնքներին ֆինանսական հատկացումների համակարգի արմատական վերանայում իրականացնել, կամ հենց բյուջեից, կամ հարկերի եւ տուրքերի գանձումների համակարգի վերանայումների միջոցով, կամ դրան եւ այլ գործիքների համախառն ներդրմամբ: Ընդ որում կարող են կիրառվել ավելի խոցելի համարվող համայնքների (սահմանամերձ, բարձրլեռնային, հեռավոր, առավել աղքատ կամ չքավոր եւ այլն) առաջանցիկ ֆինանսավորման սխեմաներ, հստակ զարգացման պլանով եւ ժամանակացույցով: Առաջարկվում է նաեւ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքով համայնքներին արտոնել առայժմ չարտոնված տեղական տուրքերի սահմանման եւ տուրքերի դրույքաչափերի սահմանման իրավունք: Այս առաջարկներն իրականացումը նպաստալու է տարբեր համայնքներում ենթակառուցվածքների եւ բարեկեցության չափանիշերով տարբերությունների արագացված կրճատմանը:

## Ամփոփում

Այս զեկույցում ամփոփվել են Հայաստանի հանրապետություն-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA)՝ Հայաստանի համաչափ զարգացմանն ուղղված հանձնառությունների կատարման իրավիճակի մոնիտորինգի արդյունքները: Այս մոնիտորինգը հենվում է փաստաթղթերի ուսումնասիրման, պետական հաստատություններից ստացված տեղեկությունների եւ մասնագիտական վերլուծությունների վրա: Չեկույցի վերջում ներկայացված են բացահայտված խնդիրները եւ դրանց լուծման առաջարկությունները, որոնք հեղինակը պատրաստ է քննարկել ցանկացած շահագրգիռ անձի հետ:

## Լեւոն Բարսեղյան

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ